

# պարանցի Նորիկը

րիկի խումբը չլինի, հաստատ ում տղերքի օրը տխուր կանցնի: ծում ու զարմանում եմ, ես Զորամասի հրամանատարին ա- լեյտենանտ Նորայր Մելքո- րաժանման բարձր մարտա- ատականության համար ձեզ ում եմ շնորհակալություն...»: այած էլ պատմում է Նորիկը, ում ո՞րն է լուրջ, որը կատակ: շոֆեր էի ու ապրուստս էլ տեղն յան ու Ռազմիկը, թե մեզ սահ- պանենք: Ամեն ինչ դրանից սկս- 1989 թվին էր, լուսահոգի Տո- յան էր, Ռազմիկ Պետրոսյանը, խասյանը, Արամը եւ մեր րանցիները»: Այսպես սկսվեց ությունը: Տղաներին տարավ հետ բերեց, տարավ ու մնաց: *որդական հրացանն* ու դիրք , կռվեց, *հայհոյեց*, հետո Ֆե- ռոտեն ընկավ, ռուս զինվորնե- , որ զենք է պետք, զինամթերք տաք, որ վառը, մյուս օրը ենք նույն խնդրի առաջ: Ծանր ժամանակներ էին, յուրայինն ու չէին տարբերվում, ռուս զին- կատարում էին կենտրոնի , որոնք ուղղված էին հայ ժո- նման պայմաններում հայ ները ստիպված եղան ռուս երից զինաթափել եւ նրան- տանկային մի ամբողջ շա- հրաշալի գործողության իրա- մեկն էլ Նորիկն էր: Այդ ում ապարանցի տղանե- նրապետության տարբեր շրջանում, Տավուշում, Նոյեմ- Շահումյանում: Որքան մո- ՍՀՄ-ի քայքայումը, այնքան զենքի ու զինամթերքի հայթայթումը: Ապարանցիները ռազմական առաջադրանքներ էին իրականացնում ռազմաճակատի տարբեր հատվածներում, եւ որտեղ Ֆեդյան ու Ռազմիկն էին, այնտեղ էլ Նորիկն էր, գնում էր առանց զգուշացնելու, պարզապես չէր սիրում հրաժեշտ տալ, կինը՝ Ալվարդը, ուրիշներից էր իմանում, որ խումբը գնացել է: 1991թ. ապարանցիները միացան «Հատուկ գնդին», հետագայում այդ կամավորականների մեծ մասը միացավ մեկ այլ՝ «Մայրաքաղաքային զորամասին»: Տղաները 1992-93թթ. բազմաթիվ ծանր մարտեր մղեցին Լաչինի հյուսիսային եւ հարավային հատվածներում:

- Մի անգամ տղերքը ընկել էին շրջափակման մեջ, թուրքերը թվով շատ էին եւ լավ զինված,- հիշում է Նորիկը,- դրությունը շատ ծանր էր, երբ մեզ տեղեկացրեցին այդ մասին եւ նրանց օգնության հասնելու հրաման տվեցին: 17 մարդով, հետեւակի մարտական մեքենայով տեղ հասանք: Երկու մասի բաժանվելով, հարձակվեցինք թշնամու վրա, վերջինս չդիմանալով մեր գրոհին՝ խուճապահար նահանջեց, տալով բազմաթիվ զոհեր: Ցավոք, այս կռվում զոհվեց նաեւ մեր լավ ընկերը, ապարանցի Մայիսը: Ադրբեջանցիների ուժերը չէին խնայում Լաչինի մարդասիրական միջանցքը հետ վերցնելու համար: Առանձնապես դաժան մարտեր տեղի ունեցան Տիգիկ 1,2 գյուղերի համար: Մի անգամ Ձերթ գյուղից շարժվեցինք Տիգիկի ուղղությամբ, որպեսզի ոչնչացնենք տեղի կրակակետերը: Մեզ հետ էր նաեւ Աշտարակի ջոկատը Աշոտ Մարտիրոսյանի հրամանատարությամբ: Հակառակորդը նկատել էր մեր առաջխաղացումը եւ ծուղակ էր պատրաստել: Դաժան կռիվ սկսվեց: Զգալով, որ թշնամին ուզում է մեզ շրջապատել, արագ հակաքայլ ձեռնարկեցինք: Աշոտը ձախ թեւով դուրս եկավ նրանց թիկունք: Թուրքերը սկսեցին անկանոն նահանջել եւ հանդիպեցին իրենց օգնության եկող ուժերի, որոնց հայերի տեղ ընդունեցին: Սկսվեց դաժան ճակատամարտ նրանց միջեւ: Շուրջ երկու ժամ տեւող կռվի ընթացքում նրանք գրեթե իսպառ միմյանց ոչնչացրին:

1993թ. ընդարձակվեց պատերազմի աշխարհագրությունը: Նորիկը մասնակցեց Կուբաթլուի, Զանգելանի, Ջեբրայիլի կրակակետերի ոչնչացման գործողություններին, այնուհետեւ անցավ Մարտակերտի ճակատ: 94թ. սկսվեց հակառակորդի կողմից ձեռնարկված հակահարձակման լայնածավալ գործողություններով: Հունվարի երկուսին ապարանցի կամավորականները տեղափոխվեցին Քելբաջար: Անծանոթ տեղանքում կողմնորոշվելը դժվար էր, թուրքերը գրավել էին Օմարի լեռնաշղթայի շատ կարեւոր բարձունքներ: Նախ անհրաժեշտ էր կանգնեցնել նրանց առաջխաղացումը: Առաջադրանքը ծանր էր, սակայն տասնհինգ օրվա դաժան մարտերից հետո հաջողվեց ետ վերցնել լեռնաշղթայի մի քանի կարեւոր բարձունքներ, որոնք հետագա հաջող գործողությունների համար կարեւոր հենակետեր դարձան: Հենց այդ ժամանակ էլ ենթասպա Նորայր Մելքոնյանին շնորհվեց լեյտենանտի կոչում: Քելբաջարում Նորիկը մնաց մինչեւ հրադադարի հաստատման օրը: Այստեղ շատ մեծ էր տարիների փորձ ունեցող կամավորականների դերը: Նրանց էր հանձնարարվում կարեւոր ու դժվարին գործողությունների իրականացումը:

Հրադադարի հաստատումից հետո Նորիկը շարունակեց զինծառայությունը: Այժմ էլ նա առաջին գծում է, մասնակցում է սահմանների պաշտպանության դժվարին գործին, զինվորների հետ հերթապահություն է անում: Տանը շատ քիչ է լինում: Դուստրերը՝ Հասմիկը, Քրիստինեն եւ Թեհմինեն ամիսներով հոր վերադարձին են սպասում:

- Չես փոշմանել, որ նվիրվել ես զինծառայությանը, ամիսներով լեռներից ցած չես իջնում, տանը չես լինում,- հարցնում եմ Նորիկին:

- Արդեն տասը տարի է այս գործի մեջ եմ. ինձ ուրիշ աշխատանքում չեմ էլ պատկերացնում: Կան այլ հանգամանքներ: Չեմ կարող իմ այս միջավայրից, իմ ընկերներից, հատկապես Ռազմիկ Պետրոսյանից հեռու լինել: Այսօր մեր ժողովրդի համար ամենակարեւորը խաղաղության պահպանումն է, որը թույլ կտա երկրի ուժերը վերականգնել, ամրապնդել բանակի ձեռքբերումները: Մի անգամ փոքր աղջիկս՝ Թեհմինեն, դպրոցից տուն եկավ եւ ասաց. «Հայրիկ ինչ լավ է, որ դու կռիվ ես գնում, դասարանում ես քո մասին եմ պատմում ու բոլորը նախանձով են ինձ նայում, խեղճանում են, որ իրենց հայրիկները կռվին չեն մասնակցել, սահման չեն գնացել»: Աղջկաս այս հպարտությունն ինձ համար մեծ նշանակություն ունի. ոգեւորում է ու իմաստավորում զինվորականի դժվարին կյանքը,- խոսքը վերջացրեց Նորիկը, ու մենք հրաժեշտ տվեցինք միմյանց: Ավագ լեյտենանտ Ն. Մելքոնյանը զինվորների հետ գնում էր հերթափոխի:

***ԱՐԱՄ ՆԵՐՍԻՍՅԱՆ***